

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 25 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքի թիվ 5 և Թեղուտի գյուղի դպրոցների կահավորում», «Հյաստանի Հանրապետության Երևան քաղաքի «Մարի Իզմիլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի համակարգչային դասարանի կահավորում», Հյաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 30 ՀՈԱԿ-ի խոհանոցի կահավորում», «Հյաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի թիվ 6 երաժշտական դպրոցի կահավորում» և «Երևան քաղաքի Դավիթաշեն վարչական շրջանի «Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում» ծրագրերը.

Հայաստանի ազգային մրցակցության հիմնադրամի կողմից իրականացվող «Տաթևի գյուղական համայնքի երկարաժամկետ զարգացում» ծրագիր.

«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող «Օբսերվացիոն մասնաշենքի վերանորոգում» ծրագիր.

«Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամ կողմից իրականացվող «Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանի կառուցում» ծրագիր.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի Սուրբ Գևորգ աղոթատեղի ու կիրակնօրյա դպրոցի վերանորոգում և կահավորում», Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջան (Հարթավան, Քուչակ, Ծաղկաշեն, Շենավան)», «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջան (Եղիպատրուշ և Նիգավան համայնքներ)», «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջան (Հարթավան համայնք)» և « Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում կովերի արհեստական սերմնավորում» ծրագրերը.

«ՍՕՍ-մանակական գյուղեր» հայակական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն», «Գյումրի, Իջևան քաղաքում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդում և մանկալքության կանխարգելում», Ֆախադպրոցական տարիքի երեխաների զարգացում և դաստիարակություն», Վռանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն», «Աջակցություն Կոտայք, Նոր գյուղ համայնքների, Իջևանի թիվ 3, Երևանի Քանաքեռ-

Ձեյթուն վարչական շրջանի թիվ 84 և 103 հանրակրթական դպրոցների ու Իջևանի թիվ 5 մանկապարտեզին» և «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրերը.

«Սեյվ Դը Չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Հատուկ կարիքներով երեխաների համար աղետների ռիսկերի նվազեցում» և «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրերը.

Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2013-2015 թվականների ընթացքում իրականացվող ծրագիրը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի պարիսպի կառուցում» և «Ռուբեն Սևակ» թանգարանին կից սարկավազաց ննջարանների լոգարանի և սանհանգույցների շինարարական աշխատանքների կազմակերպում» ծրագրերը.

«Էմմանուել» հատուկ կարիքներով երեխաների հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող, կարիքավոր երեխաների բուժում և վերականգնում» բարեգործական ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: